

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**<<ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

1. *Անհրաժեշտությունը՝* «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովվածության դեֆիցիտը մասնակի մեղմելու/ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

2. *Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝* Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող ոռոգելի հողերից 2023 թվականի հունիսի 1-ի դրությամբ, ջրօգտագործողների կողմից ներկայացված ջրապահանջի համաձայն, պայմանագրային ոռոգվելիք հողատարածությունների մակերեսը կազմել է շուրջ 31.3 հազ հա, իսկ ոռոգման ջրի պահանջարկը համակարգերի գլխամասերում կկազմի **շուրջ 445,3 մլն մ³**:

Հարկ է նշել, որ 2023 թվականի հունիսի 1-ի դրությամբ նշված հողատարածքների ջրառաջարկն ապահովող համակարգերում ջրառաջարկը՝ հանրապետության համեմատաբար խոշոր ջրամբարների լցվածությունը կազմում է 382,8 մլն մ³, որը 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 224.3 մլն մ³-ով /607,1 մլն մ³ - 382,8 մլն մ³ = 224.3 մլն մ³/:

Տևական շոգ և չոր եղանակով պայմանավորված Մարմարիկ, Հրազդան, Քասախ և Ազատ գետերում կտրուկ նվազել է ջրի հոսքը և ջրապահանջը լրացնելու նպատակով ինչպես ջրամբարներից, այնպես էլ Սևանա լճից իրականացվել են պլանավորածից վաղ ջրբացողումներ՝ նախորդ տարվա համեմատ մեկնարկել է 20 օր շուտ:

Հարկ է նշել, որ Հրազդան գետում միջին ամսական հոսքը 2023 թվականի ապրիլ և մայիս ամիսներին դիտվել է համապատասխանաբար 6,86 մ³/վրկ և 9,52 մ³/վրկ, այն դեպքում, երբ նույն ցուցանիշները 2022 թվականին կազմել են համապատասխանաբար 15,8 մ³/վրկ և 23,2 մ³/վրկ:

3. *Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝* 2023 թվականի հավանական սակավաջրության պայմաններում ոռոգման բնականոն ջրամատակարարումն ապահովելու նպատակով, հիմք ընդունելով <<Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի

կլենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված կանխատեսումը, վերը նշված հողատարածքները սնող ջրաղբյուրների ջրառաջարկը հունիսի 1-ի դրությամբ կազմում է՝

Հրազդան գետ+Մարմարիկի ջրամբարից՝ շուրջ 112,3 մլն մ³,

Ազատի ջրամբարից՝ շուրջ 20 մլն մ³,

Ապարանի ջրամբարից՝ շուրջ 0 մլն մ³,

Սևանա լճից՝ շուրջ 146 մլն մ³,

Մխչյանի և Ռանչպար պոմպակայանների առավելագույն հզորությամբ գործարկմամբ՝ շուրջ 45,6 մլն մ³:

Ընդամենը՝ շուրջ 323,9 մլն մ³,

Դեֆիցիտը՝ շուրջ 121,4 մլն մ³ :

Նշված դեֆիցիտը հնարավոր է մեղմել հրատապ միջոցառումների արդյունքում լրացուցիչ մեխանիկական ջրարտադրությամբ՝ շուրջ 51,4 մլն մ³ /տեղեկանքը կցվում է/, և Սևանա լճից լրացուցիչ ջրբացթողումներով՝ մինչև 70 մլն մ³:

4. Կարգավորման նպատակը և բնույթը՝ Անհրաժեշտ է փոխել օրենքով սահմանված ոռոգման նպատակով լճից 2023 թվականի բացթողման 170 մլն մ³ չափաքանակը՝ այն դարձնելով **մինչև 240 մլն մ³**:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները՝ ներկայացված որոշման նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից:

6. Ակնկալվող արդյունքները՝ Հողերին մատակարարվող ոռոգման ջրի դեֆիցիտի մեղմում, ջրապահովվածության բարձրացում, ընթացիկ տարվա հնարավոր սակավաջրության հնարավոր ռիսկերի մեղմում: